

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻԱՑՄԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի Հ.1 մ/դ»

ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

**Բանալի բառեր՝** գրականագիտություն, հանրամատչելիություն, տեսական հասկացություններ, ուսուցում, մեթոդաբանություն, գեղարվեստական վերլուծություն, գրական կրթություն, ուսումնական մեթոդներ, թվային ռեսուրսներ, քննադատական մտածողություն:

Հոդվածում ուսումնասիրվում են գրականագիտության արդյունավետ ուսուցման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տեսական գիտելիքների մատչելիության ապահովմանը և սովորողների ուսումնական մոտիվացիայի խթանմանը: Վերլուծվում են մեթոդական մոտեցումները և առաջարկվում ժամանակակից կրթական նորարարություններ, մասնավորապես՝ թվային գրագիտության ինտեգրումը և խաղային ուսուցման մեթոդների կիրառումը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է գրականագիտական գիտելիքի հանրամատչելի ուսուցման կառուցվածքային մոդելի անհրաժեշտությամբ, որի նպատակն է բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Ներկայացված մոդելը հիմնված է մանկավարժական փորձի վերլուծության և մանկավարժական գործունեության արդյունքների վրա:

**Ներածություն**

Ինչպես նշում է Էդ. Ջրբաշյանը, «գրականագիտությունը ուսումնասիրում է գեղարվեստական խոսքի կառուցվածքն ու իմաստային համակարգը, բացահայտում դրանց ներքին օրինաչափությունները և զարգացման տրամաբանությունը» [1, էջ 13]: Վերլուծությունը, նրա համոզմամբ, «նախ և առաջ ենթադրում է նախազգացողություն, զգայական ընկալում, ապա միայն՝ տրամաբանական կառուցում» [2, էջ 14]:

Այս սկզբունքներն ընդգծում են այն առանցքային հանգամանքը, որ գրականագիտական ուսուցումը ոչ միայն տրամաբանական մտածողության զարգացում է, այլ նաև՝ գեղագիտական զգացողության ձևավորում: Սակայն դպրոցում տեսական հասկացությունները հաճախ ընկալվում են որպես բարդ և անհասանելի, իսկ դրանց վերլուծական կիրառումը՝ խրթին:

Ժամանակակից կրթական մարտահրավերները ենթադրում են այնպիսի մեթոդների կիրառություն, որոնք միաժամանակ ապահովում են բովանդակային խորություն, մեթոդական պարզություն և սովորողի հետաքրքրվածություն: Այս համատեքստում առաջանում է հիմնարար հարցադրում. ինչպիսի՞ մեթոդական մոտեցումներ և գործիքներ կարող են ապահովել գրականագիտական գիտելիքի հանրամատչելի, համակարգված և արդի ուսուցում հանրակրթական դպրոցում:

Ներկայացված հոդվածը միտված է բացահայտելու ժամանակակից մեթոդական լուծումներ, որոնք կխթանեն գրականագիտության ուսուցման արդյունավետությունը: Վերլուծության առանցքում գրական հասկացությունների մատչելի ներկայացումն է, կրթական միջավայրի փոփոխվող պահանջներին համահունչ մեթոդաբանության ձևավորումը և նորարար գործիքների կիրառում՝ տեսության, փորձի և ստեղծագործական մտածողության միջև արդյունավետ փոխկապակցում ստեղծելու նպատակով:

**Տեսական հասկացությունների դերը գրականության ուսումնասիրման գործընթացում:** Գրականագիտական տեսական միավորներն այն հիմնասյուներն են, որոնց վրա կառուցվում է գեղարվեստական վերլուծությունը:

Ա. Առաքելյանի դիտարկմամբ՝ «գաղափարը, թեման, սյուժեն և մոտիվը մի ներքին տրամաբանությամբ կապված են միմյանց, բայց նաև սկզբունքորեն տարբերվում են՝ ներկայացնելով երկի բովանդակային և կառուցվածքային զանազան ասպեկտներ» [3, էջ 361]:

Գրականագիտական հասկացությունները ձևավորում են գեղարվեստական վերլուծության հիմքը և նպաստում տեքստի ընկալման համակարգմանը, ինչպես նաև վերլուծական մտածողության զարգացմանը: Ինչպես նշում է Լ. Ս. Վիգոտսկին, ուսուցման արդյունավետությունը բարձրա-նում է այն դեպքում, երբ տեսական հասկացությունները ներկայացվում են գործ-նական օրինակներով՝ դառնալով վերլուծության կիրառելի գործիքներ [4, էջ 83-84]: Այս մոտեցումը հիմնված է նրա սոցիո-մշակութային տեսության վրա, ըստ որի՝ գիտելիքների արդյունավետ յուրացումը տեղի է ունենում սոցիալական փոխազդեցության և գործնական գործունեության մեջ: Անհրաժեշտություն է առաջանում սահմանելու այն մեթոդաբանական սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնվի գրականագիտական գիտելիքի հանրամատչելի ուսուցումը հանրակրթական դպրոցում:

## **2. Հանրամատչելիության մեթոդաբանական սկզբունքները**

Գրականագիտական հասկացությունների ուսուցումն անհրաժեշտ է կառուցել հետևյալ սկզբունքների վրա՝

- **մատչելիություն՝** բարդ հասկացությունների պարզեցում առօրյա և գրական օրինակներով,
- **հաջորդականություն՝** նյութի աստիճանական բարդացում և տրամաբանական հաջորդականություն,
- **կրկնություն նոր մակարդակում՝** հասկացությունների պարբերական վերանայում և խորացում ուսումնական տարբեր փուլերում:

Այս սկզբունքների կիրառումը նպաստում է տեսական գիտելիքի հասանելիությանը և սովորողների ակտիվ մասնակցությանը ուսումնական գործընթացին:

## **3. Ուսուցման կառուցվածքային փուլերը**

Գրականագիտության հանրամատչելի ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել փուլային կառուցվածքով՝

- Առաջին փուլ (5-7-րդ դասարաններ)՝ տեքստի տարրական վերլուծություն՝ սյուժե, կերպարներ, հեղինակ, պատմող,
- Երկրորդ փուլ (8-9-րդ դասարաններ)՝ գրականությունը որպես սոցիոմշակութային երևույթ,
- Երրորդ փուլ (10-12-րդ դասարաններ)՝ գրական ուղղությունների, ժանրերի և պատմական զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրում: Այս կառուցվածքային մոտեցումը ապահովում է տեսական գիտելիքի աստիճանական խորացում և համակարգված յուրացում:

#### **4. Տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները**

Գրականագիտության ուսուցման գործընթացը հաճախ ուղեկցվում է մի շարք խոչընդոտներով՝

- տեսության և գործնական վերլուծության միջև անհամապատասխանություն,
- սովորողների մոտիվացիայի պակաս,
- տարբերակված ուսուցման մեթոդների սահմանափակ կիրառում,
- ուսուցիչների մեթոդական պատրաստվածության խնդիրներ,
- ժամանակակից կրթական ռեսուրսների պակաս:

Այս հիմնախնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է ապահովել մեթոդաբանական ճկունություն, ուսուցչի շարունակական մասնագիտական զարգացում և կրթական ռեսուրսների արդիականացում:

#### **5. Հանրամատչելիացումը որպես կրթական անհրաժեշտություն**

Գրականագիտական գիտելիքի հանրամատչելիացումը կարելի է ապահովել հետևյալ ուղիներով՝

- **Դասագրքային նյութերի արդիականացում՝** տեսական հասկացությունների գործնական կիրառությունը ներկայացնող օրինակների ներառում գրական վերլուծության համատեքստում,
- **Ուսուցչի ստեղծագործական մոտեցում՝** տեսական նյութի հետաքրքիր և մատչելի ներկայացում՝ պատմությունների, այլաբանությունների, համեմատությունների միջոցով,
- **Մեդիա, խաղային և նախագծային մեթոդների կիրառում՝** տեսանյութերի, աուդիո նյութերի, ինտերակտիվ խաղերի ու խնդիրների միջոցով ուսուցման կազմակերպում:

### **6. Նորարար մեթոդական մոտեցումներ**

#### **6.1 Խաղային մեթոդներ**

Դասարանում խաղային տարրերի ներառումը նպաստում է սովորողների ակտիվ մասնակցությանը և տեսական հասկացությունների արդյունավետ յուրացմանը: Կարելի է կիրառել հարցաշարային խաղեր, ինտերակտիվ հարթակներ և խնդիրների վրա հիմնված խաղեր, որոնք ուղղված են գրական կառուցվածքի տարրերի, ժանրերի և ուղղությունների ուսումնասիրմանը:

#### **6.2 Մեդիա և թվային ռեսուրսներ**

Տեսանյութերի, ձայնագրերի (փողքաստների) և ինտերակտիվ կայքերի օգտագործումը նպաստում է տեսական բարդ տերմինների պարզ բացատրությանը և նրանց խոր յուրացմանը՝ խթանելով սովորողների լսողական և տեսողական ընկալումները:

### **6.3 Միջառարկայական ուսուցում**

Միջառարկայական կապերի համակարգված կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտելու գրական տեքստերի մշակութային, պատմական և փիլիսոփայական համատեքստերը՝ նպաստելով քննադատական մտածողության ձևավորմանը:

**6.4 Տեսապատկերային ուսուցում** Սխեմաների, գրաֆիկների և տեղեկատվական աղյուսակների կիրառումը նպաստում է նյութի համակարգված և պատկերավոր ներկայացմանը, ինչն ապահովում է ավելի լավ ընկալում և ուսուցման որակ:

### **Проблемы популяризации и преподавания литературоведения**

**Ключевые слова:** *литературоведение, доступность, теоретические понятия, обучение, методология, художественный анализ, литературное образование, учебные методы, цифровые ресурсы, критическое мышление.*

Популяризация литературоведческих знаний и систематическое преподавание теоретических понятий являются ключевыми направлениями модернизации литературного образования. Это требует методологически гибких подходов, обновления учебных материалов, а также эффективного вовлечения медиа- и цифровых инструментов. В таких условиях становится возможным формирование модели обучения, способствующей углублению эстетического восприятия и развитию критического мышления.

### **Problems of popularization and teaching of literary criticism**

**Keywords:** *literary studies, accessibility, theoretical concepts, teaching, methodology, artistic analysis, literary education, teaching methods, digital resources, critical thinking.*

The popularization of literary knowledge and the systematic teaching of theoretical concepts are key directions in the modernization of literary education. These require methodologically flexible approaches, the updating of educational content, as well as the effective integration of media and digital tools. Under such conditions, it becomes possible to develop a teaching model that fosters deeper aesthetic perception and the development of critical thinking.

### **գտագործված գրականության ցանկ**

1. Զրբաշյան Էդ., Գրականագիտության ներածություն: Բանարվեստի հիմունքներ, դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. Առաքելյան Ա., Համեմատական գրականագիտության հիմունքներ, մագիստրոսական դասընթաց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2022:
3. Vygotsky L.S., *Mind in Society: The Development of Higher Psychological Processes*, Harvard University Press, 1978, 159 pages.